ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տվյալ ամփոփաթերթում ներառված սակագներն ու պայմանները կարող են փոփոխվել: Բիբլոս Բանկ Արմենիայի «Դեպի հայրենիք» վարկատեսակի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք զանգահարել +374 60 61 61 00 հեռախոսահամարին, այցելել Բանկի պաշտոնական կայքէջ՝ byblosbankarmenia.am, կամ դիմել ցանկացած մասնաճյուղ:

Մեր մասնաճյուղերը տեղակայված են հետևյալ հասցեներում.

- Աբովյան 6, Երևան
- Ամիրյան 18/3, Երևան
- Կոմիտաս 38/2, Երևան
- Բաղրամյան 84/1, Երևան

Դուք ունեք Բանկի հետ հաղորդակցվելու իրավունք ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով:

«Ձեր ֆինանսական տեղեկատուն» (fininfo.am) ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման Ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգն է:

Հրապարակված՝ 05/2024թ.
Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ» ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿ

Հայրենիքում տուն ունենալն ու ամենակարորին մոտ լինելն ավելի հասանելի է, քան դու կարծում ես: Ընտրի՛ր քո բնակարանը Հայաստանում, մենք կֆինանսավորենք դրա արժեքի մինչ 70%-ը:

ԱՐԺՈՒՅԹ	$	€
ԳՈՒՄԱՐ	10,000 - 500,000	
ԺԱՄԿԵՏ	1 - 25 տարի	
ՎԱՐԿ/ԳՐԱՎ	70%	

1

ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ

$ Առաջին 3 տարվա ընթացքում՝հաստատուն 9.75%
ացած 12 տարվա ընթացքում ՝ Բանկի՝ տվյալ պահին գործող Հաշվարկային Ցուցանիշ գումարած 5.5% հաստատուն մարժա

Տարեկան փաստացի տոկոսադրույքը՝
10.34% – 15.73%

€ Առաջին 3 տարվա ընթացքում՝ հաստատուն 8.75%
ացած 12 տարվա ընթացքում ՝ Բանկի՝ տվյալ պահին գործող Հաշվարկային Ցուցանիշ գումարած 8.75% հաստատուն մարժա

Տարեկան փաստացի տոկոսադրույքը՝
9.24% – 14.55%

i

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տոկոսադրույքը կարող է փոփոխվել Բանկի կողմից: Այն ենթակա է վերանայման տարեկան մեկ անգամ և չի կարող գերազանցել պայմանագրային տոկոսադրույքի ու դրա 50%-ի հանրագումարը և պակաս լինել պայմանագրային տոկոսադրույքի 50%-ից:

2

ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ

Անվանում	Վճար (ՀՀ դրամ)
Կադաստրի միասնական տեղեկանքի վճար	10,300 ՀՀ դրամ
Գույքի գնահատման վճար	15,000 - 20,000 ՀՀ դրամ
Գրավի պայմանագրի նոտարական վավերացման վճար	25,000 ՀՀ դրամ
Գրավի իրավունքի գրանցման վճար	72,000 ՀՀ դրամ

3

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ

Վարկային պայմանագիր կնքելու առաջարկը Բանկը Վարկառուին տրամադրում է վարկի պայմանագրի կնքումից առնվազն յոթ օր առաջ, որի ընթացքում Վարկառուն մտածում է Բանկի առաջարկած պայմաններով կնքել պայմանագիր, թե՝ ոչ:

Վարկային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում դրանք մարվում են գրավի հաշվին, իսկ բավարար չլինելու դեպքում՝ Վարկառուի այլ գույքի հաշվին: Բանկն իրավունք ունի բռնագանձում տարածելու գրավադրված գույքի վրա՝ առանց դատարան դիմելու և իրացումից ստացված միջոցներն ուղղել պարտքի մարմանը և Հաճախորդը կարող է զրկվել ձեռք բերված անշարժ գույքից,Վարկային պարտավորությունները ժամկետում չկատարելու դեպքում Վարկառուի մասին տեղեկատվությունը կարող է գրանցվել ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրում և վարկային բյուրոներում, ինչը կարող է վատ ազդեցություն ունենալ Վարկառուի վարկային պատմության վրա և հետագայում խոչընդոտ հանդիսանալ վարկ ստանալու համար:

Վարկի գումարի կամ դրա մի մասի, ինչպես նաև տոկոսների մարումների ուշացման դեպքում ժամկետանց վարկի նկատմամբ դադարում են գործել վարկային պայմանագրով սահմանված տոկոսները, և այդ գումարների վրա հաշվարկվում են տոկոսներ տարեկան 24%-ի չափով՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար:

Ժամկետանց գումարներ են համարվում վարկային պայմանագրով սահմանված ժամկետներում չմարված գումարները: Այլ վճար չի գանձվում ժամկետանց գումարների դիմաց:

Վարկառուն իրավունք ունի ժամկետից շուտ մարելու վարկը կամ դրա մի մասը: Վարկը ժամկետից շուտ մասնակի մարելու դեպքում Վարկառուն կարող է իր ընտրությամբ ավելի մարված գումարին համամասնորեն նվազեցնել ամսական վճարումների չափը՝ թողնելով վարկի մարման ժամկետը անփոփոխ, կամ նվազեցնել վարկի մարման ժամկետը՝ ամսական վճարումների չափը թողնելով անփոփոխ:

Հաճախորդի կողմից վարկի վաղաժամետ մարման յուրաքանչյուր դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդից գանձել վճար վաղաժամետ մարված վարկի գումարի 0.6 տոկոսի չափով, եթե մարումը տեղի է ունենում պայմանագրի գործողության առաջին տարվա ընթացքում, 0.4 տոկոսի չափով, եթե մարումը տեղի է ունենում պայմանագրի գործողության երկրորդ տարվա ընթացքում, 0.2 տոկոսի չափով, եթե մարումը տեղի է ունենում պայմանագրի գործողության երրորդ տարվա ընթացքում:

Վաղաժամետ վճար չի գանձվում, եթե Վարկառուն պայմանագրային տարվա որէ պահի վաղաժամետ մարում է այդ պայմանագրային տարվա համար (վարկային պայմանագրի կնքման ամսաթվին հաջորդող յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածը) մարման ժամանակացույցի համաձայն մարման ենթակա կրեդիտի մայր գումարը:

Վարկառուի կողմից Վարկը ժաետից շուտ մարելու դեպքում կնվազի վարկավորման ընդհանուր ծախսի մեջ ներառված գումարներից միայն տրամադրման վճարը: Վարկավորման համար կատարված մնացյալ ծախսերը նվազեցման ենթակա չեն:

4 ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հիփոթեքային վարկի ֆինանսավորումը կազմում է արդեն պատրաստի բնակարանի կամ առանձնատան գնահատված արժեքի կամ ձեռքբերման գնի (նվազագույնի) մինչ 70%-ը:

Կանխավճարը կազմում է 30%:

Վարկառուն պետք է Բիբլոս Բանկ Արմենիայի հաշվում ապահովի վարկի ամսական վճարի եռապատիկը, որը կուղվի վարկի վերջին երեք մարումների վճարմանը:

Վարկի տրամադրման սպասարկման միջնորդավճարներ չենկիրառվում:

Անվանական տոկոսադրույքի մեջ ներառված են գույքի երկրաշարժի ապահովագրավճարները, ապահովագրական ընկերություն է հանդիսանում «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն կամ Լիգա Ինշուրանս ԱՓԲԸ-ն:

Վարկի ամսական մարումների և պահանջվող բոլոր այլ կանոնավոր պարտքային վճարումների հանրագումարը չպետք է գերազանցի զուտ եկամտի 50-70%-ը:

Գրավադրվող անշարժ գույքը պետք է ապահովագրվի բանկի համար ընդունելի ապահովագրական ընկերություններից մեկի կողմից:

Ապահովագրման գումարը հիփոթեքային վարկի դեպքում պետք է հավասար լինի վարկի գումարին:

5 ՊԱՀԱՆՋՆԵՐ ՎԱՐԿԱՌՈՒՅԻՑ

Վարկառուն պետք է լինի 21-63 տարեկան (վարկային պայմանագրի գործողության ընթացքում) և բնակվի ցանկացած երկրում, բացի վարկի տրամադրման պահին միջազգային սանկցիաների տակ գտնվող պետություններից:

Վարկառուն պետք է ունենա միջին կամ բարձր աշխատավարձային եկամուտ կամ հանդիսանա մանր/միջին ձեռնարկատեր:

Վարկառուն պետք է աշխատի միջազգային կամ հեղինակավոր կազմակերպությունում: Անհատ ձեռներեց լինելու դեպքում գործունեությունը/բիզնեսը պետք է կայացած լինի՝ առնվազն 2 տարվա գործունեությամբ:

Վարկառուն պետք է ունենա առնվազն 3 ամսվա աշխատանքային փորձ վերջին գործատուի մոտ և միևնույն գործարար բնագավառում՝ ընդհանուր առմամբ 1 տարվա աշխատանքային փորձ: Ֆրիլանսեր լինելու դեպքում վարկառուն պետք է ունենա առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ (պայմանագրերը և քաղվածքները կծառայեն որպես ապացույց):

Վարկառուի ամսական զուտ եկամուտը պետք է լինի առնվազն 400,000 ՀՀ դրամ (կամ համարժեքը արտարժույթով):

Վարկառուն պետք է ունենա լավ վարկային պատմություն:

Համավարկառու կարող է հանդիսանալ ամուսինը, ծնողը, քույրը/եղբայրը և երեխան:

6

ՏՈԿՈՍԱԳՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԿԱՐԳԸ

Տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ հիմք ընդունելով տարին 360 օր:

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա, իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

Կախված բանկի ռիսկի գնահատման արդյունքներից՝ վարկի դիմումը կարող է հաստատվել ավելի բարձր տոկոսադրույքով կամ կանխավճարով:

Արտարժութային վարկերի տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման համար կիրառվում է Բանկի կողմից սահմանված՝ տվյալ օրվա տվյալ արտարժույթի վաճառքի փոխարժեքը, ընդ որում՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ կախված Բանկի կողմից հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:

7

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Փաստաթղթերը ներկայացվում են անձամբ վարկառուի կամ համավարկառուի կողմից, դիմումը գրելուց 15 օրվա ընթացքում: Ներկայացվում են փաստաթղթերի բնօրինակները, սակայն Բանկին տրվում են պատճենները:

1. Վավեր անձնագիր կամ նույնականացման քարտ
2. Կացության և ռեզիդենտության քարտ
3. Եկամտի վերաբերյալ տվյալներ

Եթե վարկառուն վարձու աշխատող է.

- ✔ Գործատուի կողմից տրամադրված աշխատավարձի տեղեկանք, որը ներառում է աշխատակցի զբաղեցրած պաշտոնը, պայմանագրի ժամկետը (առկայության դեպքում) և աշխատանքային տարիների թիվը:
- ✔ Աշխատանքային պայմանագրի պատճենը (եթե տվյալ ընկերությունում աշխատանքային փորձը մեկ տարուց պակաս է)
- ✔ Աշխատավարձային հաշվի քաղվածք վերջին 12 ամսվա համար

Եթե վարկառուն ինքնազբաղված է

- ✔ Ձեռնարկատիրական գործունեությունը հավաստող քաղվածք վերջին 12 ամսվա համար
- ✔ Նախորդ 2 տարվա ֆինանսական հաշվետվությունները՝ հաստատված հարկային մարմինների կամ անկախ աուդիտորական ընկերության կողմից
- ✔ Ընկերության կանոնադրության պատճենը
- ✔ Ընկերության/անհատ ձեռներեցի պետական գրանցման վկայականը
- ✔ Գործունեության իրավունքը հավաստող փաստաթուղթ (եթե առկա է)
- ✔ Գործունեության հասցեն հավաստող փաստաթուղթ (վարձակալության պայմանագրի կամ սեփականության վկայականի պատճենը)
- ✔ Հարկ վճարողի հաշվառման վկայականը

Եթե վարկառուն հանդիսանում է բաժնետեր

- ✔ Պետ. ռեգիստրի կողմից տրված տեղեկանք

4. Տվյալներ վարկային պատմության վերաբերյալ

- ✔ Վարկային ցուցանիշ կամ վարկային հաշվետվություն՝ տրված ֆինանսական հաստատության կամ լիազորված մարմնի կողմից

5. Անշարժ գույքի վերաբերյալ փաստաթղթեր

- ✔ ՀՀ պետական կադաստրի Միասնական տեղեկանք, որի տրամադրման վաղեմությունը պայմանագրի նոտարական վավերացման պահին չպետք է գերազանցի 15 աշխատանքային օրը
- ✔ ՀՀ պետական կադաստրի կողմից տրամադրված սեփականության վկայական, որը փաստում է վաճառողի սեփականության իրավունքը, պարունակում է անշարժ գույքի նկարագրությունը և գծապատկերը; Սեփականության վկայականի հիմքերը
- ✔ Գնահատման հաշվետվությունը

Կարող են պահանջվել նաև լրացուցիչ փաստաթղթեր:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Համավարկառուի առկայության դեպքում պետք է ներկայացվեն բոլոր այն փաստաթղթերը, որոնք պահանջվում են դիմորդից:

Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» (Know Your Customer) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին (նման պահանջի առկայության դեպքում):

Համաձայն «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի՝ Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

8 ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՈՒՄ

- ✔ Վարկի ձևակերպման գործընթացն իրականացվում է միայն Բիբլոս Բանկ Արմենիայի մասնաճյուղերում:
- ✔ Վարկը տրամադրվում է անկանխիկ՝ հաճախորդի բանկային հաշվին փոխանցման միջոցով:
- ✔ Վարկը տրամադրվում է պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց և գրավի վկայականը ստանալուց 3 աշխ. օրվա ընթացքում:
- ✔ Վարկի մարումներն իրականացվում են ամսական հավասարաչափ վճարումներով, նախ՝ հաշվարկված տոկոսագումարը, հետո՝ մայր գումարը: Տույժերի առկայության դեպքում դրանք վճարվում են առաջին հերթին:

Վարկի տրամադրման դրական կամ բացասական որոշման կայացման վրա ազդող հիմնական գործոններն են՝

ա. վարկային պատմությունը,

բ. վարկի նպատակային օգտագործման հիմնավորվածությունը,

գ. վարկառուի կողմից տրամադրված տեղեկությունների իսկությունը,

դ. հաճախորդի վարկունակությունը (ֆինանսական վիճակ),

ե. հաճախորդի վարկարժանությունը (Վարկառուի անձնական որակներ, վարկ ստանալու իրավական խոչընդոտների բացակայություն և այլն),

զ. վարկի ապահովվածություն հանդիսացող գրավը:

✔ Բիբլոս Բանկ Արմենիան Ձեր վարկի դիմումը կուսումնասիրի անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո 20 օրվա ընթացքում: Դրական կամ բացասական որոշման մասին Բանկը Ձեզ կտեղեկացնի 2 աշխատանքային օրվա ընթացքում և գրավոր եղանակով:

9 ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

- Վարկային պատմությունը վարկառուի կողմից ստանձնած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունն է, որը ցույց է տալիս վարկառուի պարտքերը, վճարումները, վճարումների սովորությունները և/կամ պարտավորությունների և/կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկություններ:

- Վարկային պատմության ձևավորման աղբյուրներն են ԱՔՌԱ անդամ կազմակերպությունները (բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, հետաձգված վճարումներով գործարքներ իրականացնող կազմակերպությունները, ինչպես նաև՝ հանրային տվյալների բազաներից ՀՀ կառավարության սահմանած կարգով վարկային բյուրոյին անձանց վերաբերյալ տեղեկություններ տրամադրող պետական մարմինները), որոնք տրամադրում են վարկառուի վերաբերյալ տեղեկություններ (տվյալներ):

- Եթե վարկառուի վարկային պատմության մեջ առկա են սխալ կամ թերի տվյալներ, ապա պարզաբանման և ուղղման նպատակով վարկառուն՝ համաձայն «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դրույթների, կարող է այդ մասին տեղեկացնել վարկային բյուրոյին կամ ուղղակիորեն դիմել տեղեկատվություն տրամադրող սուբյեկտներին (վարկային տեղեկատվության աղբյուրին): Տեղեկացումը կարող է իրականացվել համապատասխան գրավոր դիմում վարկային բյուրոյին ներկայացնելու միջոցով կամ էլեկտրոնային եղանակով՝ առցանց ռեժիմում Իմ ԱՔՌԱ անձնական

գրասենյակից: ԱԲՌԱ-ի կողմից տրամադրված վարկային զեկույցների վերաբերյալ հաճախորդների բողոքների ընդունման/ստացման, քննարկման և վերջիններիս արձագանքման գործընթացը, գործողությունների հաջորդականությունը սահմանվում է «ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ի «Վեճերի լուծման ընթացակարգ»-ով:

- Բանկի ներքին կանոնակարգերով վարկային պատմության պահպանման ժամկետը սահմանափակված չէ:

- Բանկում վարկային պատմության ուսումնասիրությունը և վերլուծությունը իրականացվում է համաձայն Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված նվազագույն պայմանների և պահանջների:

- Վատ վարկային պատմությունը կարող է հիմք հանդիսանալ նոր ստացվող վարկերի (ինչպես նաև այլ բանկային ծառայությունների) պայմանների խստացման կամ ընդհանրապես չտրամադրման համար:

Վարկային սքոր

- Բանկը ներկայումս վարկավորման շրջանակներում Վարկային սքոր չի կիրառում:

Քայլեր՝ վարկային պատմությունը բարելավելու համար

- Նախ, անհրաժեշտ է լիովին մարել նախկինում գոյացած ժամկետանց պարտավորությունների վճարումները: Բացի այդ, ներկա պահին գործող վարկերի մասով անհրաժեշտ է բացառել ժամկետանց՝ նույնիսկ մեկ օրվա կտրվածքով պարտավորությունների գոյացումը:

10 ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անշարժ գույքը գրավադրվում է բանկում և ենթակա է ապահովագրման մինչև վարկային պարտավորության ամբողջական մարումը:

Ապահովագրության պայմանագրով սահմանված շահառուի իրավունքը փոխանցվում է բանկին՝ մինչև վարկի ամբողջական մարումը:

Անշարժ գույքի գրավի պայմանագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով, իսկ դրանից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ իրավասու պետական մարմնում:

Բանկը համագործակցում է հետևյալ գնահատող կազմակերպությունների հետ.

- Կոստ Կոնսալտ ՍՊԸ
- Ամինտաս Գրուպ ՍՊԸ
- Օլիվեր Գրուպ ՍՊԸ
- ՎԻ ԷՄ - ԱՐ ՓԻ ՍՊԸ
- Գարդի ՍՊԸ
- ՌՎՄ Կոնսալթ ՍՊԸ
- Ալտավիպ ՍՊԸ

Բանկը համագործակցում է հետևյալ ապահովագրական ընկերությունների հետ

- Ինգո Արմենիա ԱՓԲԸ
- Լիգա Ինշուրանս ԱՓԲԸ
- ՍԻԼ Ինշուրանս ԱՓԲԸ
- ՌԵԳՈ Ինշուրանս ԱՓԲԸ
- ԷՖԵՍ ԱՓԲԸ
- Նաիրի Ինշուրանս Ապահովագրական ՍՊԸ

11 ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐԻՆ (ՆՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԴԵՊՔՈՒՄ)

Եթե Վարկառուն չի կատարում պարտավորությունները, ապա Երաշխավորը պարտավոր է վճարել նրա փոխարեն՝ այդպիսով վնասելով իր վարկային պատմությանը և կանգնելով գույքը կորցնելու վտանգի առջև:

Երաշխավորին տրամադրվում է վարկային և երաշխավորության պայմանագրերի և մարման գրաֆիկի օրինակ:

Հաղորդակցումն իրականացվում է Երաշխավորին հարմար եղանակով:

Բանկը պարտավոր է Երաշխավորին 7 օր առաջ ծանուցել պայմանագրի պայմանների փոփոխության մասին:

Բանկը պարտավոր է Երաշխավորին 1 օր առաջ հիշեցնել առկա պարտավորության վերաբերյալ, ինչպես նաև վարկի մարման ուշացման դեպքում այդ մասին տեղեկացնել նրան ամենաուշը մեկ օր հետո:

Երաշխավորը կարող է ցանկացած ժամանակ Բանկից պահանջել տեղեկություն վարկի մնացորդի չափի մասին:

Երաշխավորը կարող է Վարկառուից հետ ստանալ իր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆՎԱՆՈՒՄ	ՍԱԿԱԳԻՆ (ՀՀ ԴՐԱՄ)
Գրավի առարկայի հետ կապված համաձայնություններ*	5,000
Հաջորդող գրավի համաձայնություն*	5,000
Գրավի առարկայի փոփոխության համաձայնություն*	5,000
Ընտանիքի անդամի հաշվառման կամ հաշվառումից հանելու համաձայնություն*	1,000
Գրավներից որևէ մեկի գրավից ազատման համաձայնություն (չի կիրառվում ամբողջական վաղաժամկետ մարման դեպքում)*	5,000
Սեփականության վկայականի փոփոխության համաձայնություն*	5,000
Իրավաբանական անձի վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվության ստացում Իրավաբանական անձանց ռեգիստրից*	5,000

*Ներառյալ ԱԱՀ

Կարևոր նշում. սակագները կիրառելի են գրավի յուրաքանչյուր առարկայի համար:

Վարկի քաղվածքը կարող եք ստանալ Ձեր նախընտրած եղանակով: Քաղվածքները և տեղեկանքը տրամադրվում են ըստ ստորև ներկայացված սակագնի՝

ԱՆՎԱՆՈՒՄ	ՍԱԿԱԳԻՆ (ՀՀ ԴՐԱՄ)
Քաղվածքի տրամադրում՝ յուրաքանչյուր ամիս	**անվճար**
Քաղվածքի տրամադրում լրացուցիչ՝ մինչև 6 ամիս*	3,000
Քաղվածքի տրամադրում լրացուցիչ՝ 6 ամսից ավելի*	6,000
Հաշվի կամ վարկի վերաբերյալ տեղեկանքի տրամադրում*	3,000
Հաշվի բացման վճար (միանվագ)	5,000
Հաշվի սպասարկման վճար (ամսական)	200

*Ներառյալ ԱԱՀ